

ԽՍՀՄ ԱՌԺՈՂԿՈՄՍԱՏ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԴՅՈՒՂԱԿԱՆ ՓԵԼԴՁԵՐԱԿԱՆ ՏԵՎ ՓԵԼԴՁԵՐԱ-
ՄԱՆԿԱԲԱՐՉԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՄԸՍԻՆ

* * *

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՁԿԱԿԱՆ ՏԵՂԸՄԱՍԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

618

Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ԱՌԺՈՂԿՈՄՍԱՏԻ

04 AUG 2010

618

խ - 11

այլ

ԽՍՀՄ ԱՌԺՈՂԿՈՄԱՏ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԴՅՈՒՂԱԿԱՆ ՓԵԼԴԵՐԱԿԱՆ ՅԵՎ ՓԵԼԴԵՐԱ-
ՄԱՆԿԱՐԱՐՉԱԿԱՆ ԿԱՅԵՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

* *

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԴՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՂԱԿԱՆ ՏԵՂԵՄԱՍԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



240
40

ПОЛОЖЕНИЕ
о сельском фельдшерском
и
фельдшерско-акушерском
пункте

ПОЛОЖЕНИЕ
о сельском врачебном
пункте

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ֆելդշերական, ֆելդշերա-մանկաբարձական և մանկաբարձական կայանները հանդիսանում են գյուղական բժշկական տեղամասի սկզբնական բուժպրոֆիլակտիկ հիմնարկները, մտնում են այն գյուղական բժշկական տեղամասի կազմի մեջ, վորի տեղիտորիայի վրա նրանք կազմակերպում են և աշխատում են սույն Կանոնադրության հիման վրա, գյուղական բժշկական տեղամասի վարիչի ղեկավարությամբ ու նրա առաջադրանքներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մանկաբարձական կայանի կազմակերպումն ու աշխատանքը կառուցվում է հատուկ կանոնադրության հիման վրա:

2. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանները կազմակերպվում են մեկ-յերկու գյուղատրոհությունների ազգաբնակչությանը սպասարկելու հաշվով և ծավալվում են խոշոր բնակավայրերում, խորհրտնտեսություններին, անտառածախման ձեռնարկություններին, ՄՏԿ-ին և այլ հիմնարկներին կից:

3. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանների սպասարկման տերիտորիան, ճշտությամբ նշանակելով նրա սահմանները, բնակավայրերն ու կայանի գտնվելու տեղը, սահմանվում է այն գյուղական բժշկական տեղամասի վարիչի կողմից, վորի կազմի մեջ է մտնում կայանը և հաստատվում է շրջառաժնի կողմից:

4. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանի ղեկավար կարող է լինել միջնակարգ բժշկական կրթություն ստացած բուժակը, վորը նշանակվում է շրջանային առաժնի կողմից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ֆելդշերա-մանկաբարձական կայանի մանկաբարձունին պետք է ունենա լրիվ միջնակարգ բժշկական կրթություն:

5. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայաններն աշխատանքը տանում են բժշկական տեղամասի վարիչի ղեկավարությամբ և վերահսկողությամբ:

Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանի աշխատանքի պլանը հանդիսանալով գյուղական բժշկական տեղամասի ընդհանուր պլանի մի մասը, հաստատվում է գյուղական բժշկական տեղամասի վարիչի կողմից:

6. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայաններն ամբողջ դոկումենտացիան և իրենց աշխատանքի վերաբերյալ հաշվետվություններ կազմում են սահմանված ձևվերով և վորոշված ժամկետներին առանց ուշացումների ուղարկում գյուղական բժշկական տեղամասի վարիչին, բոլոր հաշիվները պատճենները թողնելով կայանում:

7. Պաշտոնական շրջագայությունների և հիվանդներին տանը բուժօգնություն ցույց տալու նպատակով, ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանը ձրի փոխադրական միջոցներով ապահովում է սպասարկվող կոլտնտեսությունների, խորհրտնտեսությունների, անտառամշակման կազմակերպությունների և մյուսաների հաշիվին. իսկ այնտեղ, վորտեղ այդ հնարավոր է, սեփական փոխադրական միջոցներով:

8. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանները մտնում են այն գյուղխորհուրդների բյուջեների մեջ, վորի տերիտորիայի վրա գտնվում են նրանք և ունեն հաստատված տարեկան նախահաշիվ:

9. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայաններն ունեն իրենց կնիքն ու շտամպը՝ իրենց կողմից տրվող փաստաթղթերը ձեւակերպելու համար:

II. ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ՅԵՎ ՖԵԼԴՇԵՐԱ-ՄԱՆԿԱԲԱՐԶԱԿԱՆ

ԿԱՅԱՆԻ ԲՈՒԺ-ՊՐՈՖԷԼԱԿՏԻԿ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանի վրա դրվում են հետևյալ խնդիրները՝

10. Ցույց տալ ձրի ամբուլատոր ոգնություն կայանին կըցված տերիտորիայի վրա բնակվող՝ այդ ոգնություն համար կայանին դիմող հիվանդներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանը պարտավոր է ձրի բժշկական ոգնություն ցույց տալ նաև այն դեպքերում, յերբ անհետաձգելի բուժօգնության համար նրան են դիմում հարեւան ֆելդշերական կայանի տերիտորիայից յեկած հիվանդները:

11. Իր ժամանակին գյուղական բժշկական տեղամաս ուղարկել բժշկական միջամտություն պահանջող չպարզված դիագնոզով կամ դժվար դիագնոզով հիվանդություններով հիվանդներին: Իր բժշկական տեղամասում բժիշկ չլինելու դեպքում, ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանները հիվանդին պետք է ուղարկեն ուրիշ բժշկական տեղամաս կամ շրջահային հիվանդանոց:

12. Ցույց տալ առաջին ոգնություն սուր հիվանդությունների ժամանակ և դժբախտ դեպքերում (թունավորում, արյունահոսություն, վիրավոր և այլն): Այդպիսի դեպքերում այնտեղ, վորտեղ շտապ բժշկական ոգնություն է պահանջվում, ֆելդշերը կամ մանկաբարձուհին (ֆելդշերա-մանկաբարձական կայանը) ցույց է տալիս առաջին ոգնություն և, հիվանդին մոտակա բժշկական ամբուլատորիա կամ հիվանդանոց տեղափոխելու հնարավորություն չլինելու դեպքում, շտապ կարգով բժիշկ է կանչում— գյուղական բժշկական տեղամասից կամ շրջկենտրոնից:

13. Հիվանդներին տանը ցույց տալ բժշկական ոգնություն:

14. Ծննդաբերական ոգնություն ցույց տալ տանը: Ֆելդշերական կայանում այդ ոգնությունը ցույց է տրվում ֆելդշերի կողմից, մանկաբարձուհիներին թույլ տվածի չափով— ֆելդշերա-մանկաբարձական կայանում՝ մանկաբարձուհու կողմից:

15. Ֆելդշերա-մանկաբարձական կայանը կատարում է իր տեղամասի բոլոր հղի կանանց հաշվարկը և պատրոնաժը: Այդ աշխատանքը կատարում է մանկաբարձուհին, համաձայն մանկաբարձական կայանում յեղած հրահանգի:

16. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանները յերեխաների ու անչափահասների մեջ անցնելացնում բժշկական և առողջապահական միջոցառումներ. դպրոցների, մշտուրների, մանկապարտեզների, պիոներ ճամբարների յերեխաների մեջ պարբերաբար բժշկական քննություն են կատարում ու ձեռք առնում բուժական և սանիտարա-պրոֆիլակտիկ բնույթի անհրաժեշտ միջոցներ:

17. Ֆելդշերա-մանկաբարձական կայանում ամբուլատոր ընդունելությունը կատարում է ֆելդշերը, իսկ մանկաբարձուհին տանում է կոնսուլտացիոն աշխատանքը՝ կանանց ու յերեխաների մեջ և ցույց է տալիս անհետաձգելի ոգնություն:

18. Այն որացուցային որերին, յերբ գյուղական բժշկական տեղամասի բժիշկը ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայան է գալիս, կայանի ֆելդշերը հրավիրում է ֆելդշերական կայան՝ բժշկական կոնսուլտացիայի կարիք ունեցող բոլոր հիվանդներին:

III. ՀԱՎԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՅԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

19. Յերեվան ե բերում, հաշվառման ե յենթարկում և գրանցում բոլոր ինֆեկցիոն ու սուր տենդոլ հիվանդներին:

20. Յուրաքանչյուր հայտնաբերված ինֆեկցիոն հիվանդության ինֆեկցիայի աղբյուրի և այդ դեպքերի նկատմամբ ձեռք առած միջոցառումների մասին շտապ տեղեկացնում ե շրջակա տասն տեսչին, միաժամանակ այդ մասին տեղեկացնելով գյուղական բժշկական տեղամասին:

21. Անցեկացնում միջոցառումներ՝ կանխելու ինֆեկցիոն հիվանդությունների տարածումը հայտնաբերված ոչախից: Հայտնաբերված ինֆեկցիոն հիվանդներին վաղ հոսպիտալիզացիայի յե յենթարկում տեղամասային կամ շրջանային հիվանդանոցում, կատարում ե ոչախի և կոնտրակտների համաճարակային հետազոտությունն ու մշակումը, սահմանում ե նրանց սիստեմատիկ հըսկողությունը, ինչպես և անցեկացնում սանիտարական մշակումը:

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.—Ֆելդշերա-մանկաբարձական կայանի մանկաբարձուհին §§ 19-22 թված հակահամաճարակային միջոցառումների նկատմամբ սահմանափակվում ե, անմիջապես անադանդելով ֆելդշերա-մանկաբարձական կայանի վարիչին՝ մանկաբարձական աշխատանքի ընթացքում իր կողմից հայտնաբերած սուր վարակիչ հիվանդությունների դեպքերի մասին: Համաճարակային մեծ բռնկումների ժամանակ մանկաբարձուհուն ուրիշ հակահամաճարակային աշխատանքի ներգրավելը կատարվում ե գյուղական բժշկական տեղամասի վարիչի կամ շրջաբաժնի կարգադրությամբ:

22. Կատարում ե կանխակալ պատվաստումներ՝ բնական ծաղկի, վորովայնատիֆի, արյունալուծի (դիզենտերիա) և այլ հիվանդությունների դեմ:

23. Անցեկացնում ընթացիկ սանիտարական հսկողությունը և համապատասխան սանիտարական միջոցառումները տվյալ ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանին կցված տեղամասում:

24. Սիստեմատիկորեն հսկում ե դպրոցների, մանկամսուրների և ֆելդշերական կայանի սպասարկած տերիտորիայի վրա գտնվող սուրիշ որբեկտների սանիտարական դրությունը, հետևյալում ե ջրամատակարարման, բաղնիքների սանիտարական դրությունը, ցուլց տված որբեկտների հսկողությունը ձեվակերպում ե արձանագրություններ կազմելու միջոցով, վորոնք ուղարկվում են պետական սանիտարական տեսչության մարմիններին (շրջակա տասն տեսչության):

IV. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՍԱՆԻՏԱՐԱ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

25. Սանիտարական և բուժպրոֆիլակտիկ միջոցառումները հաջող կատարելու նպատակով ֆելդշերական ու ֆելդշերա-մանկաբարձական կայանները կազմակերպում են հասարակական ակտիվ և իրենց աշխատանքում հենվում են գյուղխորհրդի առողջապահական սեկցիայի վրա:

26. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանի վարիչն աշխատում ե առողջապահական սեկցիայում և ոգտվում նրա ոգնությունից՝ մի շարք սանիտարա-առողջապահական միջոցառումներ անցեկացնելու գործում:

27. Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայաններում կազմակերպում են հասարակական սանիտարական լիազորներ, վորոնք ընտրվում ե աշխատում են ԽՍՀՄ Գլխավոր Պեղորներ, վորոնք ընտրվում ե աշխատում են ԽՍՀՄ Գլխավոր Պեղորների Սանիտարական Տեսչության կողմից 1937թ. նոյեմբերի 4-ին հաստատված՝ կոտնտեսությունների, խորհրտեսությունների և ՄՏԿ-ների հասարակական սանիտարական լիազորների մասին յեղած հատուկ կանոնադրության հիման վրա:

28. Կայանի վարիչը ղեկավարում ե հասարակական սանիտարական լիազորներին աշխատանքը և նրանց հետ անցեկացնում սանիտարական պատրաստությունից պարապմունքներ:

29. Բացի հասարակական սանիտարական լիազորների հետ տարած աշխատանքից, ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանները պարապմունքներ են կազմակերպում Կարմիր խաչի խմբակներում, կազմակերպում են սան-պոստեր և հրահանվում են նրանց՝ ժամանակին, անհետաձգելի ոգնությունը ցուլց տալու դաշտային և այլ աշխատանքների ժամանակ վիրա-վորվածներին ու վնասվածներին:

30. Գյուղական բժշկական տեղամասի համար մշակված, ազգաբնակչության մեջ տարվելիք սանիտարա-լուսավորական աշխատանքի պլանի համաձայն, ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանների աշխատողները սիստեմատիկաբար սանիտարական-լուսավորական աշխատանք են կատարում՝ զեկուցումներ, դրույցների, սանիտարա-լուսավորական՝ գրականություն, թերթիկների, ընթերցանությունների, խմբային ու անհատական դրույցների միջոցով: Այդ նպատակի համար ոգտա-գործելով ակումբները, խրճիթ-ընթերցարանները, ընդհանուր ժողովներն ու հանրակացարանները:

V. ՖԵԼԴՇԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

31. «Միջին բժշկական ատամնաբուժական և դեղագործական կադրեր պատրաստելու մասին» ԽՍՀՄ Ժողովրդական Կոնգրեսի, 1936 թ. սեպտեմբերի 8-ի վերջին համաձայն, ֆելդշեր (բուժակ) կոչումը արվում է այն անձանց, վերոնշյալ տվել են սահմանված քննությունները, ֆելդշերական դպրոցի ծավալով:

32. Ֆելդշերի աշխատանքի շրջանակի մեջ և մտնում կատարել հետեվյալ փոքրիկ խիրուրգիական ոպերացիաները, պահպանելով ասեպտիկայի կանոնները.

ա) Մակերեսային թարախակույտերի բացումը.

բ) Քննելու և շոշափելու ժամանակ հեշտությունը վերջնական մակերեսներին տեղավորված ոտար մարմինների հանելը.

գ) Մաշկի կարեր ու լիզատուրաներ դնելն արյունահոսություն, վիրավորումների և ինցիզիաների դեպքում, պահպանելով ասեպտիկայի բոլոր կանոնները.

դ) Տեղը դրել վոչ բարդ հոդախախտումները.

յե) Կատետերիզացիայի յենթաբերանի միզափամփուշտը փափուկ կատետերով—մեղը դուրս բերելու նպատակով.

զ) Դնել ամենահասարակ անշարժացնող կապեր՝ ջարդվածքների և հոդախախտումների դեպքում.

ե) Գործադրել չոր բանկաներ, խարանիչներ (ճանճամահլամ).

ը) Կատարել դեղանյութերի ներմաշկային, ներմկանային ներսրսկումներ և ներարկումներ.

թ) Ատամների հանումներ, վոչ բարդ դեպքերում.

ժ) Կիրառել տեղական քլոր-եթիլի նովսկայինի անեթիզիաներ (անդդայացում).

ի) Մանկաբարձուհիների բացակայության դեպքում ցույց տալ մանկաբարձական ոգնություն մանկաբարձական իրավունքների սահմաններում:

Անհետաձգելի դեպքերում, յերբ բժիշկ կանչելու հնարավորություն չկա, ֆելդշերն առանց անդդայացնելու (նարկոզի) կատարում է հետեվյալ մանկաբարձական միջոցառումներն ու ոպերացիաները.

1) Կենդանացնել պտուղը ասֆեքսիայով:

2) Համապատասխան ցուցմունքների դեպքում բանալ պլուզափամփուշտը ծննդաբերություն ժամանակ:

3) Ցույց տալ ձեռքի ոգնություն կոնքային նախադրվածքների ժամանակ:

4) Անել մանկաբարձական դարձ վոտքի վրա՝ անվնաս ջրերի ժամանակ և նսրմալ կոնքում՝ խոտորնակի և շեղ դեպքերում:

5) Չանջատվող ընկերքի ժամանակ, հետծննդյան շրջանում կիրառել Կրեդեյի միջոցը:

6) Ձեռքով կատարել ընկերքի անջատումը և հետադրտել արգանդի խոռոչը:

7) Կատարել հեշտոցի տամպոնաա:

8) Կարել շեքի առաջին և յերկրորդ աստիճանի պատրվածքները:

9) Կատարել ծննդաբերություն ցավազրկում՝ Առժողովրդատի հրահանգի համաձայն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վերոնշյալ բոլոր ոպերացիաները կատարվում են, պահպանելով խոտադոյն ասեպտիկա և անտիսեպտիկա, համապատասխան պայմանների և ցուցմունքների դեպքում:

33. Բժշկի բացակայության դեպքում ֆելդշերը կարող է փոխարինել նրան բուժարաններում և վոչ մեծ ստացիոնարներում, պայմանով, վոր կոնսուլտացիայի համար կցվի մոտակա բուժհիմնարկի բժիշկը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ընդհանուր անդդայացումը ֆելդշերների կողմից կատարվում է միայն բժիշկների ներկայությամբ և վերջինիս պատասխանատվությամբ:

34. Ֆելդշերը պետք է պատրաստված լինի առաջին ոգնությունը ցույց տալու և խնամելու այն հիվանդներին, վորոնք վարակված կլինեն մարտական թունավոր նյութերով:

35. Տեղամասում դեղատուն չլինելու դեպքում, բժշկի դեղատոմսի համաձայն, ֆելդշերը պետք է կարողանա դեղ պատրաստել բժշկական տեղամասում:

36. Ինքնուրույն բժշկական կայանի վարիչը, ինչպես նաև դյուղական բժշկական տեղամասի ժամանակավոր վարիչը, կամ բժշկի բացակայության ժամանակ նրան փոխարինող ֆելդշերը իրավունք ունի իր ստորագրությունով, նշելով պաշտոնը և բժշկական կոչումը, դուրս գրել դեղատնից բոլոր անհրաժեշտ դեղերը, այդ թվում թունավոր և խիստ ներգործող նյութերը, ամենաբարձր ընդունելությունը չգերազանցող դոզաներով:

37. Ֆելդշերն իրավունք ունի.

ա) Ղեկավարել հիվանդանոցային այն ղեկատուները, վորտեղ հաստիքով ղեկավարած չի տրված, խստորեն պահպանելով ղեկատուների գրեթե՝ թունավոր և խիստ ներգործող ղեկամիջոցները— ղեկատուներում պահելու և բաց թողնելու համապատասխան հրամաններն ու կանոնները:

բ) Տալ հիվանդանոցային թերթիկներ այն վայրերում, վորտեղ չկա բուժող բժիշկ, հետագա վերահսկողությունը բժշկական տեղամասի վարիչի կողմից:

Այդպիսի ֆելդշերները ցուցակն ու ժամկետները, վորի ընթացքում կարող են նրան հիվանդանոցային թերթիկներ տալ, սահմանվում են ՀԱՄԿԽ-ի և ԽՍՀՄ Առողջկոմատի պահանջի հիման վրա:

գ) Տալ տեղեկանքներ՝

1) պավաստումների մասին, 2) ծնվելու մասին, 3) հղի կանանց ավելի թեթև աշխատանքի փոխադրելու մասին, 4) մահվան մասին, 5) նրանից ողջովո՞ղ անձի հիվանդություն մասին, 6) առողջության դրություն մասին,—վերջին յերկու ղեկավարում հիմնարկների կամ կազմակերպությունների պահանջով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տրվող փաստաթղթերը, ինչպես նաև ղեկատուները, պետք է ստորագրված լինեն ֆելդշերի կողմից, ցույց տալով իբրև կոչումը: Կնիք պահանջող փաստաթղթերն ու ղեկատուները կնքվում են այն հիմնարկի կնիքով, վորտեղ աշխատում է ֆելդշերը:

38. Միջնակարգ բժշկական կրթություն ունեցող ֆելդշերներն ողջովում են այն իրավունքներից, վորոնք սահմանված են մինչև բժշկական աշխատողների համար՝ բարձրագույն ուսումնական հաստատություն մտնելու վերաբերյալ (ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1933 թ. սեպտեմբերի 15-ի վորոշումը), ինչպես նաև աշխատանքի պահպանություն և թոշակային ապահովագրություն վերաբերյալ:

39. Լրիվ միջնակարգ բժշկական կրթություն չստացած ֆելդշերներն իրավունք ունեն անցնել մինչ-վորակավորման դասընթացները կամ այդ առթիվ գործող կանոնների համաձայն ընդունվելու տալ երստերնատի կարգով:

VI. ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՇՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

40. «Միջին բժշկական աստիճանական և ղեկավարական կադրեր պատրաստելու մասին» ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. սեպտեմբերի 8-ի վորոշման համապատասխան, մանկաբարձուհու կո-

չում և տրվում այն անձանց, վորոնք տվել են սահմանված ընդունվողները 2-ամյա մանկաբարձական դպրոցի ծավալով:

41. Մանկաբարձուհին պատրաստվում է աշխատելու:

ա) Ինքնուրույն կերպով տեղամասի պայմաններում (կոլտընտեսային ծննդական, մանկաբարձական կայան), վորտեղ ինքնուրույն կերպով ցույց է տալիս ստացիոնար, կոնսուլտացիոն և բացատրական մանկաբարձական ոգնություն:

բ) Քաղաքային և շրջանային մանկաբարձագինեկոլոգիական հիմնարկներում (ծննդատներ, հիվանդանոցներ, ծննդաբերական բաժանմունքներ, կանանց կոնսուլտացիաներ և այլն) մանկաբարձուհին աշխատում է բժշկի ղեկավարությամբ:

42. Մանկաբարձուհին պետք է լավ տիրապետի անհրաժեշտ տեսական ու գործնական գիտելիքներին՝ մասնագիտական բուժ պրոֆիլակտիկ աշխատանք տանելու համար:

43. Մանկաբարձուհին պետք է իմանա նորածինների խնամքի կանոնները, ինչպես նաև նորածինների հիվանդությունների պրոֆիլակտիկան:

44. Յուրաքանչյուր մանկաբարձուհի պետք է պատրաստված լինի ցույց տալու առաջին ոգնությունը և խնամելու հիվանդներին—մարտական թունավոր նյութերով վարակված լինելու դեպքում:

45. Բժշկի բացակայության դեպքում, Առբաժնի կողմից կարող է իրավունք տրվել մանկաբարձուհուն՝ տալ հղիության պատճառով անաշխատունակության թերթիկ (դեկրետային արձակուրդ):

46. Իր գործնական աշխատանքում մանկաբարձուհին պետք է տիրապետի՝

ա) կարողանալ գիտագնոգել նորմալ և պաթալոգիկ հղիությունը, վորոշել հղիության դեկրետային արձակուրդային ժամկետները, ինչպես և գիտենալ հիմնական կանացի հիվանդությունների գինեկոլոգիական հետազոտությունը և գիտագնոտիկայի մեթոդները—ժամանակին բժշկի մոտ ուղարկելու համար:

բ) կարողանալ ձանաչել ծննդաբերության նորմալ և պաթալոգիկ ընթացքը, ինչպես նաև նորմալ ծննդաբերության և հետծննդյան շրջանի անցկացման տեխնիկան:

գ) իմանալ նորածնի և ծծկեր յերեխայի խնամքի ու վերջինիս կերակրելու հիգիենային գիտելիքներն ու տեխնիկան:

դ) Իմանալ գինեկոլորդիական հիվանդությունները բուժման կոնսերվատիվ մեթոդների գիտելիքներն ու տեխնիկան, բժշկի ղեկավարությունը ներառյալ հիմնական տեղեկություններ ֆիզիոտերապևտիկայից.

յ) Աղգարնակություն մեջ սանիտարա-հիգիենիկ միջոցառումներ, ինչպես նաև կնոջ հիգիենայի և մայրություն ու մանկություն պահպանություն բնագավառում սանկուլտ-աշխատանք կատարելու մեթոդներին.

զ) Հղիության պրոֆիլակտիկայի մեթոդիկային (հակաբեղ-սնավորման միջոցների կիրառում).

կ) Հիվանդների խնամքի մեթոդիկային ու տեխնիկային, այսինքն.

1) Դիտենալ անղգայտցման հիմնական մեթոդները:

2) Կարողանալ ամենաթյա աշխատանքում կիրառել ասեպտիկայի ու անտիսեպտիկայի բոլոր անհրաժեշտ կանոնները:

3) Անել խիրուրգիական վիրակապումներ:

4) Կարողանալ պահել, ստերիլ (ստերիլիզացիայի յենթարկել) խիրուրգիական գործիքները, վիրակապակա նյութերը և հիվանդի խնամքի առարկաները:

5) Ոգնել բժշկին՝ ոպերացիաների ու ներքին ներարկումների ժամանակ և կատարել ամենապարզ անալիզներ (մեղի):

6) Կարողանալ մաշկի տակ մտցնել դեղամիջոցներ և ֆիզիոլոգիական լուծույթ, գործադրել հասարակ, դեղային և սննդատար հոգնաներ, դնել բանկաներ, կոմպրեսներ, սղրուկներ, ջերմաթրջոցներ, կարողանալ բաց թողնել մեղը կատետերով:

7) Դիտենալ ամենազլխավոր, խիստ ներգործող դեղերի դոզերովկան, դեղեր պահելու կանոնները և նրանց կիրառելու ձևերը, հասկացողություն ունենալ ամենազլխավոր դեղեր և անտիսեպտիկ լուծույթներ պատրաստելու միջոցների մասին, ազատ կարգալ, արտադրել և գրել դեղատոմսեր բժշկի ցուցումների համաձայն:

8) Դիտենալ մաշկի, ականջների, բերանի, քթի խնամքի բոլոր ձևերը, մանավանդ յերեխաներին:

9) Կարողանալ դիտել, պահատել և գրել ծննդաբերի ու ծննդկանի դրությունը, չափել ջերմաստիճանը և տանել նրա կորագիծը, կռել ծննդկանին, կատարել կոնքի չափումներ, հաշվել պուլսը, շնչառությունը, չափել արյան ճնշումը, հետևել ծննդաբերի և ծննդկանի ընդհանուր ինքնազգայությունը:

10) Կատարել ծննդաբերի սանիտարական մշակումը և հիվանդների մեկուսացումը բուժհիմնարկի պայմաններում և կենցաղում, գիտենալ դեղինֆեկցիոն ու դեղինսեկցիոն գործի հիմունքները և կարողանալ դեղինֆեկցիայի և դեղինսեկցիայի հիմնական մեթոդները կիրառել կենցաղում և բուժհիմնարկներում, գիտենալ ամենից ավելի տարածված ինֆեկցիոն հիվանդությունների տարածումն ու պրոֆիլակտիկան (կարմրուկ, քութեղ, դիֆտերիա) և ծաղիկահատում կատարել:

47. Շտապ մանկաբարձական ոգնություն ցույց տալու կարգով այնտեղ, վորտեղ այդ ոգնությունը չի կարող ցույց տրվել բժշկի կողմից, նրա բացակայության պատճառով, մանկաբարձուհին իրավունք ունի.

1) Կենդանացնել պտուղը ասֆեքսիայով:

2) Համապատասխան ցուցմունքների դեպքում պատուել պտղափամփուռը ծննդաբերության ժամանակ:

3) Ցույց տալ ձեռքի ոգնություն կոնքային նախադրվածքների ժամանակ:

4) Անել մանկաբարձական դարձ վտտքի վրա՝ անվնաս ջրերի ժամանակ և նորմալ կոնքում՝ խոտորնակի ու շեղ դրություն դեպքերում:

5) Չանջատվող ընկերքի ժամանակ, հետծննդյան շրջանում կիրառել Կրեդեյի միջոցը:

6) Ձեռքով կատարել ընկերքի անջատումը և հետադուռել արգանդի խոռոչը:

7) Կատարել հեշտոցի տամպոնատ:

8) Կարել շեքի առաջին և յերկրորդ աստիճանի պատրուվածքները:

9) Կատարել ծննդաբերության ցավազրկում՝ Առժողկոմատի հրահանգի համաձայն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բոլոր մանկաբարձական ոպերացիաները կատարվում են, պահպանելով խոտազույն ասեպտիկա և անտիսեպտիկա, համապատասխան պայմանների և ցուցմունքների դեպքում:

48. Հույժ շտապ ոգնություն ցույց տալու համար, մանկաբարձուհին իրավունք ունի իր ստորագրությունը դեղեր դուրս գրել դեղատնից: Իրենց բաղադրություն մեջ թունավոր և խիստ ներգործող նյութեր պարունակվող դեղերից, մանկաբարձուհին կարող է դուրս գրել միայն՝

1) Լյապիս 1, վոչ բարձր լուծույթում, 2) կոֆեյին և նրա

ադերը, 3) սուլեմայի լուծույթ 1:1000 (0,1) վոչ բարձր, 4) սպիրտի թարմիր դեղատոմսից 5,0-ից վոչ ավելի, 5) ստիպտի-
ցին, 6) պղնձարջասպ, 7) սպորինի թանձր և հեղուկ եքս-
տրեալներ, 8) սպորին, 9) սանտոնինի դեղահատիկներ, 10)
լանդերի հեղուկ և 11) 0,015-ից վոչ բարձր կոդեյնի պարու-
նակող դեղահատիկներ:

49. Լրիվ միջնակարգ բժշկական կրթություն ունեցող ման-
կաբարձուհին ոգտվում է այն իրավունքներից, վորոնք սահ-
մանված են միջին բժշկական աշխատողների համար՝ բարձրա-
գույն ուսումնական հաստատություն մտնելու վերաբերյալ
(ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1933 թ. սեպտեմբերի 15-ի վորոշումը),
ինչպես նաև աշխատանքի պահպանություն թոշակային ապա-
հովազություն վերաբերյալ:

50. Լրիվ միջնակարգ բժշկական կրթություն չստացած
մանկաբարձուհին իրավունք ունի անցնել նախավորակավորման
դասընթացները կամ այդ առթիվ դործող կանոնների համա-
ձայն քննություն տալ եքստերնատի կարգով:

ՖԵԼԴԵՐԱԿԱՆ, ՖԵԼԴԵՐԱ-ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱՆ

1. Գիրք՝ ամբուլատոր հիվանդներին ցուցակագրելու հա-
մար:
 2. Մատյան՝ հիվանդներին հիվանդանոց ընդունելու, ստա-
ցիոնար հիվանդներին ցուցակագրելու համար:
 3. Կարոնի գրքույկ՝ հիվանդներին ոգնություն հատուկ տե-
սակի կոնսուլտացիաների ուղարկելու համար:
 4. Գիրք՝ տնային ոգնությունը գրելու համար:
 5. Մատյան՝ ինֆեկցիոն հիվանդներին ցուցակագրելու հա-
մար:
 6. Քարտեր՝ սուր վարակիչ հիվանդությունների մասին տե-
ղեկացնելու համար:
 7. Գիրք՝ տնային ծննդաբերական ոգնությունը գրելու հա-
մար:
 8. Գիրք՝ աշխատունակության թերթիկներ տալը գրանցե-
լու համար:
 9. Տրախոմայով հիվանդների վերահսկողական ցուցակ:
 10. Մատյան՝ ծաղիկի դեմ պատվաստումները գրանցելու հա-
մար:
 11. Վերահսկողական մատյան՝ առաջին անգամ գրանցված,
մալարիայով հիվանդներին ցուցակագրելու համար:
 12. Միասնական քարտ՝ մալարիայով հիվանդների համար:
 13. Ծննդաբերության նկարագիրը՝ կոլտնտեսային ծննդա-
կան, ֆելդշերական, ֆելդշերա-մանկաբարձական կայանի հա-
մար:
 14. Գիրք՝ կոլտնտեսային ծննդատան, ֆելդշերական, ֆելդ-
շերա-մանկաբարձական կայանի ծննդաբերությունները գրելու
համար:
 15. Որագիր՝ կոլտնտեսային ծննդատան, ֆելդշերական և
ֆելդշերա-մանկաբարձական կայանների համար:
- Այն ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայաննե-
րը, վորոնք պրոֆիլակտիկ աշխատանք են տանում մալարիայի
դեմ, բացի գրանցից, պետք է տանեն ակրիլինիդացիայի թերթ
և բուենիֆիկատորների որագիր (տես մալարիայի կայանի դոկու-
մենտացիան):

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

1. Ֆելդշեր	1
2. Մանիտարուհի	1
Ընդամենը	2

ՖԵԼԴՇԵՐԱ-ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

1. Ֆելդշեր	1
2. Մանկաբարձուհի	1
3. Մանիտարուհի	1
Ընդամենը	3

Հ ա վ ե լ վ ա ծ № 3

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ՅԵՎ ՖԵԼԴՇԵՐԱ-ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՇԵՆՔԸ

1. Նախասենյակ	5 քառ. մետր
2. Սպասարան հանդերձարանի հետ	20 » »
3. Կարբինետ հիվանդներին ընդունելու համար	12 » »
4. Վիրակապական սենյակ	12 » »
5. Զուգարան	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն ֆելդշերական կայանը, Վորը բժշկական տեղամասից 6 կիլոմետր ավելի հեռու չե գտնվում, պետք է ունենա 10—12 քառ. մետր տարածություն մի սենյակ՝ ծանր հիվանդներին մինչև հիվանդանոց ուղարկելը, ժամանակավորապես տեղավորելու համար:

ԲԺՇԿԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՄԱՐ

ՍՊԱՍԱՐԱՆ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆԻ ՀԵՏ

1. Թիկնակալ նստարաններ հիվանդների համար	4 հատ
2. Կախարաններ	2 »
3. Փոքրիկ սեղան ջրի համար	1 »
4. Զրաման կամ բակ ջրի համար	1 »
5. Լազան (թաս)	1 »
6. Մատուցարան (եմալից)	1 »
7. Բաժակներ	2 »
8. Թքամաններ (հատակի)	2 »
9. Սեղան՝ հանրամատչելի գրականության համար	1 »
10. Լամպ	2 »
11. Սենյակի ջերմաչափ	
12. Ցուցահանդես սանյուղս գծով	

0576

ԿԱԲԻՆԵՏ ՅԵՎ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ՍԵՆՅԱԿ

1. Գրասեղան	1 հատ
2. Աթոռ	2 »
3. Տարուբետկա	3 »
4. Թախտ՝ փափուկ գլխատակով	1 »
5. Փոքրիկ աթոռ՝ վոտքերի համար	1 »
6. Պահարան գործիքների համար	1 »
7. Պահարան դեղերի համար	1 »
8. Պահարան սպիտակեղենի համար	1 »
9. Սեղան վիրակապական	1 »
10. Փոքրիկ սեղան՝ դեղեր պատրաստելու, բաց թողնելու համար	1 »
11. Փոքրիկ սեղան՝ գործիքների համար	1 »
12. Փոքրիկ պահարան՝ կախովի, գրադարանային	1 »
13. Լվացարան պատվանդանով	1 »
14. Սափոր ջրի համար	1 »
15. Ոճառի աման	1 »
16. Ամաններ (եմալից) զանազան	4 »

17. Դուլլ եմալից	1 »
18. Դուլլ ցինկապատ	2 »
19. Կաթսաներ (եմալից) խռովերով	2 »
20. Ժամացույց (պատի)	1 »
21. Պրիմուս	1 »
22. Լամպ (նավթի)	3 »
23. Թքաման (հատակի)	3 »
24. Պատգարակ	1 »
25. Ջերմաչափ (սենյակի)	1 հատ
26. Խողանակ (հատակի)	1 »
27. Դոգաթիակ (աքանդաղ) աղբի համար	1 »
28. Կրակխառնիչ	1 »
29. Պլակատներ՝ առաջին ողնություն ցույց տալու գծով	1 »
30. Սալաններ	6 »
31. Սրբիչներ	10 »
32. Խալաթներ (բժշկական)	6 »
33. Թասակներ	6 »
34. Բարձեր (փոքր)	2 »
35. Բարձի յերեսներ	6 »
36. Վալիկներ	2 »
37. Կախարաններ՝ սրբիչների և խալաթների համար	2 »

ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

1. Ստերիլիզատոր գործիքների համար, նավթի տաքացու- մով	1 հատ
2. Ափսեներ (եմալից) փոքր	2 »
3. Ժապավեն սանտիմետրի	1 »
4. Բիկսեր (փոքր) մետաղե	2 (3)
5. Ապարատ կոխի հոսող-շողիով ստերիլիզ. համար	1 հատ
6. Բանկաներ (վիրակապական նյութի համար) խցաններով	3 »
7. Կորնցանգներ՝ նյութերն ու գործիքները ստերիլիզ. համար	2 »
8. Սկալպելներ զանազան	5 »
9. Պինցետներ անատոմիական	2 »
10. Պինցետներ խրուրդիական	2 (3) »

11. Պինցետներ արտելանունքների	1 հատ
12. » ատամի	1 »
13. » Պեան	4 »
14. » Կոխերի	4 »
15. » տրախոմատոզ	2 »
16. Ասեղբունիչ	1 »
17. Ասեղներ (խրուրդիական) զանազան	15 »
18. Մկրատ Կուպպերի	2 »
19. » սրածայր ուղիղ	1 »
20. » բութծայրով ուղիղ	1 »
21. Ջոնդ փորակավոր	2 »
22. » կոճակավոր	2 »
23. Շպրից «Ռեկորդ» 2,0	2 »
24. » «Ռեկորդ» 5,0	1 »
25. Ասեղներ շպրիցի	15 »
26. Ուտր (ժգուռ) եամարիսի	1 »
27. Ուլեր (մետաղե) ձեռքի	2 »
28. » վոտքի	2 »
29. Կաղապարներ զանազան	10 »
30. Կատետերներ (մետաղե) զանազան	4 »
31. » ուետինե	4 »
32. Ջոնդ ստամոքսի պսակիկով	1 »
33. Կոպամբարձիչ	1 »
34. Կեռիկներ Միշելի	100 »
35. Պինցետ՝ Միշելի կեռիկի համար	2 »
36. Վաննաներ աչքի	2 »
37. Խոշորացույց ձեռքի	1 »
38. Կաթոցիկ աչքի	6 »
39. Հայելի քթի	1 »
40. Ջոնդ քթի	1 »
41. » ականջի	1 »
42. Հայելի ականջի Գարտմանի	1 »
43. Պինցետ ականջի	2 »
44. Կեռեր՝ ականջից ոտար մարմինները հանելու համար	1 »
45. Յուլապակի (ոսփրեկտոր) խոշորացույցի	1 »
46. Հայելի կոկորդի	2 »
47. Ասեղ Փրանկի	1 »
48. Ապակիներ առարկայական	20 »

49. Փորձանոթներ ապակյա	20	»
50. Ասեղներ ծաղկահատուկյան համար	6	»
51. Տրոակար	1	»
52. Ծխոց ուտինե	1	»
53. » (մետաղի) փորի համար	1	»
54. Փուշիկներ սառույցի համար	2	»
55. Բալոններ (ուտինե) զանազան	3	»
56. Բերանլայնացնող մետաղե	1	»
57. Լեզվաբուխ	1	»
58. Արյունածուծ բանկաներ	20	»
59. Եսմարիի գավաթ անոթով	2	»
60. Թասիկներ յերիկամանման	3	»
61. Մետաքս ամպուլներով	30	ամպուլա
62. Մուրճ պերկուսիոն	1	հատ
63. Պլեսսիմետոր	1	»
64. Լսափողակ փայտյա	1	»
65. Այրոցիկ սպիրտի	1	»
66. Զերմաչափ մաքսիմալ	5	»
67. Զերմաչափ ջրի համար	2	»
68. Բահակ (շպաղեղ) լեզվի համար՝ մետաղե	1	»
69. Բահակներ	100	»
70. Սեղմիչ Մորի	3	»
71. Մեքենա՝ մաղեր խուզելու համար	1	»
72. Ածելի մետաղե	1	»
73. Փոկ ածելի սրելու համար	1	»
74. Պետքանոթ եմալե, տակը դնելու	1	»
75. Շշիկներ խցանով 10, 20 և 30,0	10-ական	
76. Սրվակներ 10, 20, 30, 50, 100 և 200,0	1-ական	
77. Բաժակիկներ ղեղերի համար	3	հատ
78. Բանկաներ խցանով 100 և 200,0	5-ական	
79. Աքցաններ կտցանման, ատամնաբուժական ստորին և միարմատ ատամների համար	1	հատ
80. Աքցան կտցանման ստորին	1	»
81. Նույնը վերին աջ արմատ. ատամների համար	1	»
82. Նույնը՝ ձախ	1	»
83. Նույնը՝ վերին կտրիչների և ժանիքների համար	1	»
84. Նույնը՝ բացանեանի միջին այտիկներով	1	»
85. Մանկաբարձական պայուսակ	1	»

Դեղատնային գույքը և ղեղերը՝ ղեղատնային կայան-
կազմակերպելու մասին 1938 թ. մայիսի 28-ի հրահանգի համա-
ձայն:

ՖԵԼԴԵՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

193 թ. « _____ » յեռամսյակի համար

Հիմնարկի անունը _____

ՆՍՀ _____ մարզ (յերկիր), ինքնավար ՆՍՀ _____

շրջան

Բնակավայր՝ քաղաք, բանվորական ավան, գյուղ _____

(ընդգծել, գրել անունը և փոստային հասցեն) _____

Հիմնարկի տեղը՝ ա) Ֆելդշերական կայան, _____

Ֆելդշերա-մանկաբարձական կայան, քույրական, տրախոմատող

կայան _____ (ընդգծել գրել)

բ) Մշտական, սեզոնային (ընդգծել),

գ) Խորհրդատեսուկթյանը, ՄՏԿ-ին, կոլտնտեսուկթյանը կից

(ընդգծել, գրել):

Հիմնարկը ժողտադրական միջոցներ ունի՝ այո, վոչ (ընդգծել և

գրել ինչպիսի):

1 Կայանի հոսսիքներ

Պաշտոնները (գրույքները առ հաշվետու յեռամսյակի վերջը	Ընդամենը պաշտոններ	Ա Յ Դ Թ Վ Ո Ի Մ			
		Միջին բուժանձ- նակազմ	Նբանցից Ֆելդշեր	Կրտսեր բուժանձնա- կազմ	Այլ անձնակազմ
Հաստիքային զբաղեցրած					

2. Հիվանդների ռադիալիումն ամբուլատորիայում և տանը

Տ Ն Ա Յ Ի Ն Ո Գ Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն	
Բոլոր հաճախողների թիվը ամբուլատորիայում	Հաճախումների թիվը Միջինը և նրանցից Ֆելդշեր
	Միջինը և նրանցից Ֆելդշեր

3. Ստացիոնարի գործունեությունը

Նախահաշվային մասնակալների թիվը	Այդ թվում ծըննդաբերական	Փաստորեն ծավալված մահճակալների թիվն առհաշվետու յեռամսյակի վերջը	Նրանցից ծննդաբերական	Ընդունվել են հիվանդանոցներ	Այդ թվում ծննդաբերական	Անցեկացրած բոլոր հիվանդանքների կողմից մահճակալները յեռամսյակի վերջը	Այդ թվում ծննդաբերական
1	2	3	4	5	6	7	8

Յեռամսյակի ընթացքում ընդունված են ծնունդներ _____

Ստացիոնար հիվանդանքների ընդհանուր թվից մահացել են _____

Այդ թվում ծննդաբերությունյան կապակցությամբ _____

4. Հաշվառման մեջ են տրախտմայով հիվանդանքներ _____

5. Տրախտմայով հիվանդանքների հաճախումների թիվը _____

4-րդ և 5-րդ կետերը լրացվում են ֆելդշերական և քույրական տրախտմայով կայանների կողմից:

Տեղեկություններ աշխատողների քվի և աշխատավարձի մասին հաշվետու յեռամսյակի ընթացքում

Ցուցակային կազմի աշխատողների աշխատավարձի ըստ բոլոր վարձուհիների և աղբյուրների հաշվետու յեռամսյակի ընթացքում (սուբսիդիաներով)	Ցուցակային կազմի աշխատողների աշխատավարձի ըստ բոլոր վարձուհիների և աղբյուրների հաշվետու յեռամսյակի ընթացքում (սուբսիդիաներով)	Ցուցակային կազմի աշխատողների քվի			
		Այդ թվում հաշվառված են ծախսերի նախահաշվի 1 հոգվածի հաշիվ (սուբսիդիաներով)	Առ 1-ը հաշվետու յեռամսյակի	Առ 1-ը նոր յեռամսյակի	Այդ թվում համատեղողներ, վորոնք հիմնական աշխատում են այլ հիմնարկներում
1	2	3	4	5	6

Ընդամենն աշխատողներ					
---------------------	--	--	--	--	--

2-րդ սյունյակում ցույց տված գումարից բացի, հաշվեգրված են աշխատավարձ տվյալ հիմնարկի ցուցակում չհղող կողմնակի աշխատողները՝

ա) ծախսերի նախահաշվի հոգված 1-ի հաշվին _____

բ) ուրիշ հոգվածների և աղբյուրների հաշվին _____

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթն հիմնարկը լրիվ յեռամսյակ չի աշխատել, որից առաջ փակ լինելու օրերի թիվը և պատճառը:

Վարչի ստորագրությունը

« _____ » 193 թ.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաշվետվությունը կազմում են մշտական և սեզոնային ֆելդշերական, ֆելդշերա-մանկաբարձական, քույրական տրախտմաւող կայանները, հաշվետվություն չեն կազմում արդյունաբերական ձեռնարկություններին կից ֆելդշերական բուժկայանները, մանկաբարձական կայանները և ֆելդշերական մալարիայի կայանները:

2. Գյուղական բժշկական տեղամասի կազմի մեջ մտնող կայանները հաշվետվությունը ներկայացնում են գյուղական բժշկական տեղամասին, բոլոր մնացածները՝ շրջանային (քաղաքային) առաքածիներին:

3. Հաշվետվությունը կազմվում են հետեվյալ գրքերի հիման վրա՝ գիրք հիվանդանքներին ցուցակագրելու համար ֆելդշերական կայանում, գիրք տնային ոգնությունների համար, մատյան ծննդաբերությունների ընդունելությունյան և տեղեկությունների նորածինների մասին, իսկ տրախտմայով կայանների համար տրախտմայով հիվանդանքների լրացուցիչ վերահսկողական ցուցակով:

4. Հաստիքային և զբաղեցրած պաշտոնների թիվը ցույց են տրվում առ հաշվետու շրջանի վերջը. աշխատակցի ժամանակավոր բացակայությունյան դեպքում (արձակուրդ, գործուղում և այլն) պաշտոնը զբաղեցրած են համարվում:

5. Հաճախումների թվի մեջ չեն մտցվում պրոցեդուրային հաճախումները (վիրակապում, մասաժ և այլն), իսկ տնային հաճախումների թվի մեջ չեն մտցվում պրոցեդուրային հաճախումները. ծննդաբերական ոգնությունյան կապակցությամբ արված այդ հաճախումները մտցվում են հաճախումների ընդհանուր թվի մեջ:

6. 3-րդ կետը լրացվում է ստացիոնար ունեցող կայաններին կողմից:

«Նախահաշվային մահճակալների թիվը» և «Այդ թվում ծնունդաբերական» սյունյակում ներկայացվում է նախահաշվային մահճակալների թիվը առ հաշվետու շրջանի վերջը:

Փաստորեն ծավալված մահճակալ է համարվում սարքավորված և հիվանդների ընդունելու պատրաստ մահճակալը, անկախ նրանից, զբաղեցրած է նա, թե վոչ:

Մահճակալ-որերը հաշվելիս, ընդունվելու և դուրս գրվելու որը հաշվվում է վորպես մեկ որ:

3-րդ կետում «Ընդամենը ծնունդներ են ընդունված յեռամսյակի ընթացքում» տողում ցույց է տրվում ստացիոնարում ընդունած ծնունդների թիվը:

7. 4—5 կետերը լրացվում են տրախոմատոզ կայանների կողմից (Ֆելդշերական և քույրական):

8. Հաշվետվությունը ներկայացվում է տարեկան 4 անգամ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ յեռամսյակների համար և չորրորդ անգամ՝ ամբողջ տարվա համար:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Բուժ-պրոֆիլակտիկ ոգնությունն ցույց տալը և գյուղական ազգաբնակչության մեջ հակահամաճարակային և սանիտարական միջոցառումներն անցկացնելն իրագործվում է տեղամասային հիվանդանոցա-ամբուլատոր կամ ամբուլատոր բժշկական հիմնարկների կողմից, այդ սպասարկման համար հատկացրած տերիտորիայի մասի-շրջանի տեղամասի վրա գտնված և նրան կցված ուրիշ բուժպրոֆիլակտիկ հիմնարկներին հետ միասին:

2. Նայած նրան կցված շրջանի տեղամասին սպասարկող հիմնական հիմնարկի բնույթին, այս վերջինս կոչվում է «Գյուղական հիվանդանոցային բժշկական ծառայություն» կամ «Գյուղական ամբուլատոր բժշկական ծառայություն»:

3. Գյուղական բժշկական տեղամասը (հիվանդանոցա-ամբուլատոր կամ ամբուլատոր) աշխատանքում միացնում է բժշկական տեղամասին կցված տերիտորիայի վրա գտնված բոլոր ֆելդշերական, ֆելդշերա-մանկաբարձական, մանկաբարձական կայանները, ինքնուրույն և կոլտնտեսային ծննդատները, մշտական և սեզոնային գյուղական մսուրները, մասնագիտական (տուբերկուլյոզի, վեներական հիվանդությունների, մալարիայի, տրախոմայի և այլ հիվանդությունների դեմ պայքարի) կայաններն ու կետերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գյուղական բժշկական տեղամասի կազմի մեջ չեն մտնում այն հիմնարկները, վորոնք անմիջականորեն չեն սպասարկում տվյալ տեղամասի ազգաբնակչությանը, ինչպես որինակ՝ սանատորիաները, հանգստյան տները, հոգեբուժական գաղութները, ինչպես նաև առողջապահական վերադաս մարմինների և գերատեսչությունների կողմից կազմակերպված տնտ-հաշվաբարկյան բժշկա-սանիտարական հիմնարկները:

4. Գյուղական բժշկական տեղամասին կցվում է վորոշ տերիտորիա շրջանի տեղամաս՝ իր ազգաբնակչությամբ և արդյունաբերական կետերով (կոլտնտեսություններ, խորհրտնտեսություններ, ՄՏ կայաններ, ՄՏ արհեստանոցներ, ձեռնարկություններ և այլն):

5. Գյուղական բժշկական տեղամասերի թիվը, նրանց սահմաններն ու հաստիքները հաստատվում են մարզային առողջապահական բաժինների կամ ԽՆՋՆԱՎԱՐ ԽՍՀ Առողջկոմատներին կողմից, նայած շրջանում հիվանդանոցային ու ամբուլատոր հիմնարկների տեղավորմանը, ազգաբնակչության քանակին և բնակավայրերի թվին ու նրանց հեռավորությունն այդ հիմնարկներից, հաստատվում են Միութենական հանրապետությունների համապատասխան Առողջկոմատների կողմից:

6. Տեղամասի տերիտորիայի վրա գտնված բուժ-պրոֆիլակտիկ և սանիտարական հիմնարկներն աշխատում են միասնական համատեղամասային պլանով՝ բժշկական տեղամասի վարիչ-բժշկի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ:

7. Շրջանային կենտրոնի, քաղաքների, քաղաքատիպ ֆաբրիկա-գործարանային ավանների, խորհրդայինների բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկները, տվյալ հիմնարկների կողմից սպասարկվող շրջանի մասի նկատմամբ, բժշկական տեղամասի ֆունկցիաներն իրագործում են այս կանոնադրության հիման վրա: Այդ կետերում մի քանի բուժհիմնարկների առկայության դեպքում, այդ ֆունկցիաները, մարզային Առաջնի կարգադրությամբ հանձնվում են նրանցից մեկին:

8. Գյուղական բժշկական տեղամասը մտնում է շրջանային բյուջեի մեջ և անմիջականորեն յենթարկվում է շրջանային առաջնին, աշխատում է շրջառաջնի վարիչի հաստատած պլանով:

9. Բժշկական տեղամասի վարիչը՝ նշանակվում, տեղափոխվում ու ազատվում է շրջառաջնի կողմից և հաստատվում մարզային առաջնի վարիչի կողմից:

10. Աշխատանքի կազմակերպման գործում ոգնություն ցույց տալու և բժշկական հարցերի վերաբերյալ կոնսուլտացիայի համար շրջառաջնի կողմից գյուղական բժշկական տեղամասին են կցվում շրջանային հիվանդանոցի և շրջանի ուրիշ մասնագիտացված հիվանդանոցների և ամբուլատորիաների բժիշկները:

II. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Գյուղական բժշկական տեղամասի և նրա կազմի մեջ մտնող բուժ-պրոֆիլակտիկ ու սանիտարական հիմնարկների հիմնական խնդիրներն են՝ կանխել և լիկվիդացիայի յենթարկել

սուր վարակիչ հիվանդությունները, բարելավել տեղամասի սանիտարական դրությունը, սպասարկել ազգաբնակչությանը բուժ-պրոֆիլակտիկ ոգնություն, իջեցնել ազգաբնակչության հիվանդացունքները և բարձրացնել նրա սանիտարա-կուլտուրական գրգռությունը:

12. Այդ խնդիրների համեմատ, գյուղական բժշկական տեղամասը կատարում է հետևյալ պարտականությունները՝

ա) Ցույց տալ ազգաբնակչությանը ամբուլատոր և մահճակալային ոգնություն, ինչպես նաև անհետաձգելի ոգնություն տանը.

բ) Ցերեկվան բերել ինֆեկցիոն հիվանդությունները, հոսպիտալիզացիայի յենթարկել նրանց ազգաբնակչության մեջ, դըպրոցներում, մուրհներում և այլն անցկացնել սանիտարա-պրոֆիլակտիկ ու հակահամաճարակային միջոցառումներ.

գ) Ցույց տալ ծննդաբերական ոգնություն ու պատրոնած հղի կանանց և ծնկեր յերեխաներին.

դ) Անցկացնել բուժական և առողջապահական միջոցառումներ յերեխաների և ղեռահասների մեջ.

յե) Ուսումնասիրել տեղամասի սանիտարական դրությունը, նրա վրա յեղած հիվանդացունքներն ու մահացունքները.

զ) Տեղամասի ազգաբնակչության մեջ անցկացնել սանիտարա-կուլտուրական աշխատանք.

ե) Ընտել և ժամանակին անցկացնել հիվանդների ընտելությունը բուժման հատուկ ձևերի համար՝ մասնագիտացված բժշկական ոգնություն, սանատորա-կուրորտային ոգնություն և այլն:

ը) Ձեռնարկել տուբերկուլյոզի, վեներական հիվանդությունների, տրախոմայի և այլ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ.

թ) Վորոշել բանվորների և կոլտնտեսականների ժամանակավոր անաշխատունակությունը.

ժ) Կազմակերպել հասարակական ինքնագործունեությունը տեղամասի առողջապահական հարցերի շուրջը, կազմակերպել ԿԽ-ի խմբակներ, սանիտարներ, սանկայանականներ—գաշտային աշխատանքների ժամանակ.

ի) Ձեռնարկել միջոցառումներ տեղամասի հիմնարկների միջին և կրտսեր բուժանձնակազմի վորակը բարձրացնելու ուղղությամբ:

Նշված խնդիրները և նրանցից բոլոր միջոցառումների կատարումը տեղամասի վողջ բժշկական անձնակազմի պարտականությունն է:

III. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

13. Գյուղական բժշկական տեղամասի բոլոր բուժհիմնարկների աշխատողների պարտականությունների մեջ, բացի հիմնարկում հիվանդների ամբուլատոր և ստացիոնար սպասարկումից, մտնում է սիստեմատիկ սանիտարական, հակահամաճարակային, առողջապահական և այլ աշխատանքներ տանելը տեղամասում:

14. Տեղամասային աշխատանքը տարվում է տեղամասի հիմնարկների բժշկական և միջին բուժանձնակազմի ղեպի տեղամաս պլանային շրջագայություն կազմակերպելու միջոցով, գյուղական բժշկական տեղամասի վարիչի կողմից մշակված այդ մեկնումների գծագրի և համատեղամասային արտադրական պլանի հիման վրա: Մեկնումների պլանի մեջ պետք է կոնկրետ նշվեն մեկնող աշխատողները, մեկնելու ուղիները, այդ մեկնումների ժամկետներն ու նպատակները:

Մեկնումների գծով առաջադրանքների կատարման վերաբերյալ հաշվետվությունը յուրաքանչյուր աշխատող ներկայացնում է բժշկական տեղամասի վարիչին: Այն աշխատողների ցուցակը, վորոնք պարտավոր են տեղամասային աշխատանք տանել, կազմում է տեղամասի վարիչը, հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի աշխատանքի առանձնահատկությունները:

15. Արտապլանային մեկնումները տներում՝ ծննդաբերական ոգնություն ցույց տալու համար տրվում են համաճարակային ղեպներում, ըստ տեղամասի բուժպրոֆ հիմնարկների հրավերի՝ անհետաձգելի ոգնություն ցույց տալու համար և ուրիշ հույժ շտապ դեպքերում:

16. Դեպի տեղամաս, գյուղական բժշկական տեղամասը մեկնումներն ապահովվում են սեփական փոխադրական միջոցներով և ճանապարհային հատուկ հագուստով:

17. Սեփական փոխադրական միջոցների բացակայության դեպքում՝ ղեպի կոտնտեսություններ, խորհրտեսություններ և այլ հիմնարկներ մեկնելու փոխադրամիջոցներով ապահովվում են տվյալ հիմնարկների կողմից:

18. Տեղամասային աշխատանք տանելու և պլանային մեկնումներն ապահովելու նպատակով, գյուղական բժշկական տեղա-

մասի և նրա կազմի մեջ մտնող բուժպրոֆ հիմնարկների յուրաքանչյուր բժշկական աշխատողի համար սահմանվում է շաբաթական մեկ օր — տեղամասային օր — ազատ հիմնարկում աշխատելուց:

19. Այն դեպքերում, յերբ հիմնարկում աշխատելուց լիովին ազատվելը հնարավոր չէ իրագործել, առանց խախտելու հիմնարկի նորմալ աշխատանքը (հիվանդանոցային և ստացիոնար հիմնարկներ), մեկնումները պետք է կառուցվեն ի հաշիվ մասնակի ազատումների կամ աշխատանքից ազատ ժամանակ:

20. Ամբուլատոր բժշկական տեղամասերում, ֆելդերական վայաններում և տեղամասի ուրիշ ամբուլատոր հիմնարկներում սահմանվում է ընդհանուր տեղամասային օր, ազատ հիվանդների ամբուլատոր ընդունելությունից:

21. Վորպեսդի անհատական և ընդհանուր տեղամասային օրը լրացուցիչ հանգստի օրվա չվերածվի, ինչպես տեղամասի վաքիչը, այնպես և շրջաօրհանի վարիչը կատարում են այդ մեկնումների խիստ հաշվառումն ու վերահսկողությունը:

22. Գյուղական բժշկական տեղամասի վարիչը և նրա բժիշկներն իրենց տեղամասային օրերին մեկնում են առաջին հերթին տեղամասի բուժպրոֆիլակտիկ հիմնարկները: Այդ մեկնումների ժամանակ բժիշկը կոնսուլտացիա յե տալիս հիվանդներին, ստուգում է այդ հիմնարկների աշխատողների կողմից իրենց պարտականությունների կատարելը, ստուգում է նրանց աշխատանքի պլանի կատարումը, հաշվետվության սահմանված ձևերի ճիշտ տանելը և իր կողմից յուրաքանչյուր մեկնումը գրանցում է հատուկ տետրակի մեջ, վորտեղ գրում է իր բոլոր կարգադրություններն ու դիտողությունները: Հաջորդ հաճախումների ժամանակ բժիշկը ստուգում է այդ կարգադրությունների և դիտողությունների կատարումը:

23. Ընդհանուր տեղամասային օրվա ամսաթվերը, մինչև նրանց կյանքում կիրառելը, նախապես համաձայնեցվում ու հաստատվում են շրջաօրհանի կողմից և դրանից հետո լայնորեն ծանուցվում տեղամասի բնակություն ու բանվորներին մեջ, գյուղխորհուրդների, կոտնտեսությունների վարչությունների, պրոֆկազմակերպությունների և ձեռնարկությունների, խորհրտեսությունների, ՄՏ կայանների և ՄՏ արհեստանոցների ադմինիստրացիայի և ուրիշ կազմակերպությունների միջոցով:

24. Ընդհանուր տեղամասային օրը բժշկական տեղամասում պետք է ապահովվի անհետաձգելի ոգնություն ցույց տալը հերթապահ բուժ աշխատողի կողմից:

IV. ՍԱՆԻՏԱՐԱ-ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

25. Տեղամասի տերիտորիայի վրա հակահամաճարակային միջոցառումներ և համասանիտարական աշխատանք տանելը դրվում է տեղամասի բուժհիմնարկի վրա: Բժշկական տեղամասի վարիչը շրջանային պետսանտեսչության հետ համապարապես պատասխանատու չէ տեղամասի ընդհանուր սանիտարական և հակահամաճարակային դրուժյան համար:

26. Սանիտարական և հակահամաճարակային միջոցառումները տեղամասի տերիտորիայի վրա իրագործվում են գյուղական բժշկական տեղամասի և նրա տերիտորիայի վրա գտնված բուժ-պրոֆհիմնարկների (բժշկական-ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանների և այլն) բոլոր բուժաշխատողների ուժերով:

27. Հակահամաճարակային և սանիտարական աշխատանքը տեղամասի տերիտորիայի վրա կատարվում է այդ աշխատանքի ընդհանուր շրջանային պլանի հիման վրա, մշակված շրջառաժ-նի-շրջպետսանտեսչի կողմից, վորը և իրագործում է սիստեմատիկ մեթոդական ու ոպերատիվ ղեկավարութունը և այդ պլանի կա-տարման վերահսկողութունը տեղամասում:

28. Սանիտարական և հակահամաճարակային միջոցառում-ների տեղամասային պլանը կազմվում է շրջանային պլանի հի-ման վրա, բժշկական տեղամասի վարիչի կողմից, հաշվի առնե-լով այդ տեղամասի առանձնահատկութունները, և հաստատվում է շրջառաժնի կողմից:

29. Գյուղական բժշկական տեղամասի հակահամաճարակա-յին միջոցառումները նպատակ ունեն՝

ա) Ֆերիվան բերել, հաշվի առնել և դրանցել բոլոր ինֆեկ-ցիոն հիվանդներին ու պարզված դիագնոզով սուր տենդոց հի-վանդներին:

բ) Յուրաքանչյուր հայտնաբերած ինֆեկցիոն հիվանդու-թյուն, ինֆեկցիայի աղբյուրի, այդ դեպքերի նկատմամբ ձեռք առնված միջոցների մասին տեղեկացնել շրջառաժնի-շրջպետ-սանտեսչին, այդ հարցի առթիվ գոյութուն ունեցող հրահանգի՝ համաձայն՝ շտապ հաղորդման քարտ ուղարկելու միջոցով:

գ) Կատարել ինֆեկցիոն հիվանդութունների վաղ դիագնոս-տիկան, կիրառելով ամենապարզ սերոլոգիական ռեակցիաներ:

դ) Անցկացնել միջոցառումներ հայտնաբերված ոջախից ին-ֆեկցիոն հիվանդութունների տարածումը կանխելու ուղղու-թյամբ, կատարել յերեվան բերված ինֆեկցիոն հիվանդների վաղ հոսպիտալիզացիան, համաճարակային հետադոտությունը, ոջախի ու կոնտակտների մշակումը և սահմանել նրանց սիստե-մատիկ հսկողությունը:

յե) Կատարել ուշագիր սանիտարական մշակում հիվանդին հիվանդանոց ընդունելու և դուրս գրելու ժամանակ, ճիշտ դնել հիվանդների և ուղեկցողների իրերի դեզինֆեկցիան (պարազիտար ինֆեկցիոններ), հիվանդներին դուրս գրելու սահմանված ժամ-կետների համաձայն:

զ) Անցկացնել նախապահպանական պատվաստումներ՝ բնա-կան ծաղիկի, վորովայնատիֆի, արյունալուծի դեմ:

30. Տեղամասի տերիտորիայի վրա համաճարակային բուժ-կումների դեպքում վարիչ-բժիշկը կանչում է շրջպետսանտես-չին կամ եպիդեմիոգին, այդ դեպքում չդադարեցնելով համա-պատասխան միջոցառումները տեղամասի սեփական միջոցներով:

31. Ընդհանուր սանիտարական միջոցառումների ուղղու-թյամբ գյուղական բժշկական տեղամասը իր տերիտորիայի վրա անցկացնում ընթացիկ սանիտարական հսկողություն՝

ա) Հետեվում է՝ մթերային խանութների, ճաշարանների, հանրակացարանների, փայտամշակումների և ուրիշ մանկական հիմնարկների ու ձեռնարկությունների, խոհրտեսությունների, ՄՏԿ-ՄՏԱ-ների սանիտարական դրությանը:

բ) Դպրոցների, մսուրների և ուրիշ մանկական հիմնարկների սանիտարական վիճակին:

գ) Ջրամատակարարման աղբյուրներին, ջրհորները նորո-գելու, նրանց պահելու և այլ միջոցառումների անցկացմանը:

դ) Բաղանիքների նորմալ և անխափան աշխատանքին, նը-րանց սանիտարական դրությանը և նրանց մոլ ճիշտ ոգտագոր-ծելու, պահելու դեպքում, տեղական մարմինների միջոցով ձեռք է առնվում համապատասխան միջոցներ:

32. Ընդհանուր սանիտարական և հակահամաճարակային մի-ջոցառումները կիրառելու համար, գյուղական բժշկական տեղա-մասը մասնակից է դարձնում հասարակական սանիտարական լիա-զորներին, վորոնք սանիտարա-հասարակական լիազորների վե-րաբերյալ ԽՍՀՄ Գլխպետսանտեսչության հատուկ կանոնադը-

բության հիման վրա, աշխատում են տեղամասի վարիչի և տեղամասի տերիտորիայի վրա գտնված բուժպլանի հիմնարկներին բժշկական առնձնակազմի ղեկավարութեամբ:

33. Տեղամասի սանիտարական դրությունը բարելավելու վերաբերյալ, տեղամասի աշխատողների կողմից կոտնտեսութուններին վարչութիւններին, խորհանոտութիւններին, ձեռնարկութիւններին ազմինիստրացիաներին, գյուղխորհուրդներին արված ցուցումներն ու առաջարկութիւնները չկատարելու բոլոր դեպքերի մասին, տեղամասի աշխատողներն անմիջապէս արձանագրութիւն են կազմում և տեղամասի վարիչին միջոցով ուղարկում շրջակա տնտեսիչին և շրջառաքինի վարիչին՝ հարկ յեղած միջոցներ ձեռք առնելու համար:

34. Ի լրումն այս կանոնադրութեան, գյուղական բժշկական տեղամասը հակահամաճարակային և ընդհանուր սանիտարական աշխատանքներում ղեկավարվում է ԽՍՀՄ Առողջկոմատի և Միութեանական Հանրապետութիւնների Առողջկոմատների հատուկ հրահանգներով և ցուցումներով:

35. Հակահամաճարակային և ընդհանուր սանիտարական միջոցառումներ անցկացնելու համար, գյուղական բժշկական տեղամասի հաստիքներում մտցվում են սանիտարական ֆելդշեր ու դեղինֆելտոր, վորոնք աշխատում են տեղամասի վարիչի ղեկավարութեամբ և շրջակա տնտեսիչի վերահսկողութեամբ: Գյուղական բժշկական տեղամասը պետք է սարքավորված լինի անհրաժեշտ դեղինֆելցիոն գործիքներով ու դեղինֆելցիոն միջոցներով:

V. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

36. Գյուղական բժշկական տեղամասը ձրի ամբուլատոր բուժպլանի ղեկավարի ոգնութիւնն է ցույց տալիս տեղամասի բնակչութեանը՝ սահմանված որերին ու ժամերին, վորի մասին տեղամասի բնակչութեանը լայնորեն հայտարարում է գյուղխորհուրդների, կոտնտեսութիւնների վարչութիւնների, ձեռնարկութիւնների, խորհանոտութիւնների, ՄՏԿ—ՄՏԱ-ների պլանի կազմակերպութիւնների ու ազմինիստրացիաների և այլ կազմակերպութիւնների միջոցով:

37. Գյուղական բժշկական տեղամասը պարտավոր է ձրի ամբուլատոր ոգնութիւնն ցույց տալ նաև ուրիշ բժշկական տեղամասերից և շրջաններից յեկածներին:

38. Ամբուլատոր ոգնութիւնը պարտավոր են տանել տեղամասի բոլոր բժիշկները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ինքնուրույն ընդունելութիւնը, այն էլ միայն լրիվ միջնակարգ կրթութիւնն ունեցող միջին բժշկական անձնակազմի կողմից, թույլ է տրվում բժշկի բացակայութեան ժամանակ, ինչպէս նաև բժշկի հիվանդութեան, նրա շտապ մեկնելու, արձակուրդի կամ գործուղման և այլ դեպքերում:

39. Մատենավարութիւնը, դոկումենտացիան (ամբուլատոր քարտեր տանելը, անալիզների տվյալներ գրելը, հիվանդանոցային թերթիկներ, տեղեկանքներ տալը և այլն) պետք է տարվեն սահմանված ձեւերի ու կանոնների համաձայն:

40. Մասնագէտների հետ կոնսուլտացիայի նպատակով համապատասխան հիվանդներ են ընտրվում և կանչվում են շրջանից կամ շրջանային մասնագէտացրած հիվանդանոցներից, մասնագէտների տեղամաս գալու ժամանակ, կամ թե ուղարկվում են մարզային և շրջանային մասնագէտացրած բուժհիմնարկներ:

VI. ՍՏԱՑԻՈՆԱՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

41. Գյուղական բժշկական տեղամասում ստացիոնար բուժման յինթակա յին առաջին հերթին՝

ա) Տվյալ տեղամասի տերիտորիայի հիվանդները:

բ) Այն ամբուլատորային տեղամասերի հիվանդները, վորոնք ստացիոնար սպասարկման համար նրան են կցված:

42. Հիվանդների ընդունելութեան ու սպասարկման կարգը, մնալու ժամկետը, դուրս գրելու կարգը և այլն կատարվում է հատուկ հրահանգի հիման վրա:

43. Ստացիոնար մասնագէտացրած ոգնութիւնն ցույց տալու համար հիվանդին ուղարկում են շրջանային, միջշրջանային, քաղաքային, մարզային հիվանդանոցներն ու ինստիտուտները:

VII. ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՈՒ

ԾԾԿԵՐ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐՈՆԱԺ

44. Գյուղական բժշկական տեղամասը ցույց է տալիս ինչպէս մահճակալային, այնպէս էլ տնային ծննդաբերական ոգնութիւն:

45. Մահճակալային ծննդաբերական ոգնութիւնը տեղամասի տերիտորիայի վրա ցույց է տրվում՝

ա) Հիվանդանոցային բժշկական տեղամասի ծննդաբերական բաժանմունքում.

բ) Բժշկական ամբուլատորիային տեղամասերին և բուժակային մանկաբարձական կայաններին կից ծննդաբերական մահճակալներին.

գ) Ինքնուրույն ծննդաբերական տանը, այդպիսին տեղամասում լինելու դեպքում.

դ) Կոտնտեսային ծննդաբերական տանը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հիշված հիմնարկների աշխատանքը կազմակերպվում է հատուկ կանոնադրությունների և հրահանգների հիման վրա:

46. Տնային ծննդաբերական ոգնությունը ցույց է տրվում՝

ա) Տեղամասի տեղամասային մանկաբարձուհու (մանկաբարձուհիներին) կողմից.

բ) Տեղամասի մանկաբարձական և բուժակային-մանկաբարձական կայանների մանկաբարձուհիների և մանկաբարձուհի-բուժակուհիների կողմից.

գ) Մանկաբարձուհու հրավերով՝ բժշկական տեղամասի բժիշկներին կողմից:

47. Գյուղական բժշկական տեղամասը կատարում է ծծկեր յերեխաների կոնսուլտացիոն ընդունելություն և յերեխաների ու հղի կանանց ակտիվ պատրոնաժ, տանում է սանիտարա-լուսավորական աշխատանք մայրերի մեջ: Այդ աշխատանքն ուժեղացնելու համար բժշկական տեղամասի հաստիքների մեջ մտցվում է հատուկ քույր՝ մայրություն ու մանկություն պահպանություն յայան գծով:

48. Տեղամասի պրոֆհիմնարկները բժշկական քննություն են յենթարկում յերեխաներին՝ նրանց մսուրներում հավաքագրելուց առաջ և հետագայում կանոնավոր կերպով հետեվում են մսուրների աշխատանքին և քննում նրանցում յեղած յերեխաներին:

VIII. ՍԱՆԻՏԱՐԱ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

49. Սանկուլտաշխատանքի հիմնական խնդիրները տեղամասում հանդիսանում են.

ա) Մոր և մանկան առողջություն պահպանություն և ամբիպանդման ուղղություն միջոցառումների պրոպագանդան մանկական հիվանդություն և մահացություն դեմ մղվող պայքարում.

բ) Սանիտարա-առողջապահական և հակահամաճարակային միջոցառումների պրոպագանդան.

գ) Սանկուլտաշխատանք դպրոցականների, մանկավարժների և դպրոցների տեխնիկական աշխատողների մեջ (Կարմիր խաչի, ՊԱՄՊ-ի խմբակներին կազմակերպումը դպրոցականների մեջ).

դ) Սանիտարա-լուսավորական աշխատանք հիվանդների մեջ, նրանց այնպիսի անհրաժեշտ հիգիենիկ ունակություններ պատվաստելու և զիտելիքներով զինելու ուղղությունը, վորոնք նպաստում են բուժական ներգործություն առավելագույն եֆեկտիվություն.

յե) Մորելիզացիայի յենթարկել հասարակությունը, գյուղում առողջապահական միջոցառումներ անցկացնելու համար՝ բաղանիքների, ջրհորների կառուցում, բնակարանների, կոտնտեսություններում, խորհտնտեսություններում, տնամերձ հողամասերի սանիտարական բարեկարգություն և այլն:

50. Սանկուլտաշխատանքը տեղամասում գլխավորում է բժշկական տեղամասի վարիչը, վորը ղեկավարում է վերահսկում է տեղամասի ամբողջ անձնակազմի այդ ուղղությունը տարած աշխատանքը: Այդ աշխատանքը տեղամասում պետք է տարվի ըստ միասնական որացուցային պլանի, կազմված տեղամասի կուսակցական և հասարակական կազմակերպությունների հետ:

IX. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՒՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏՐԱՒՈՄԱՅԻ ՅԵՎ ՍԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

51. Գյուղական բժշկական տեղամասը, շրջանային և մարզային հատուկ հիմնարկների մեթոդական ղեկավարությունը, տուբերկուլյոզի, վեներական հիվանդությունների, տրախոմայի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումներն անցեկացնում հետեվյալ ուղղությունը՝

ա) Հայտնաբերել և հաշվի առնել համապատասխան հիվանդությունները.

բ) Հիվանդների նկատմամբ կիրառել բուժական միջոցառումներ, վորոնք մատչելի յեն տեղամասի աշխատանքի պայմաններում.

գ) Կիրառել պրոֆիլակտիկ միջոցառումներ ինֆեկցիայի ոջախներում:

Այդ ուղղությամբ ծավալուն աշխատանքով բժշկական տե-

դամասերի աշխատանքն ուժեղացնելու համար տրվում է միջին բժշկական վորակի հատուկ բժշկական աշխատող:

52. Տեղամասի ազգաբնակչության մեջ ցույց տրված այս կամ այն հիվանդության դեպքում, տեղամասի կազմի մեջ կարող են ծավալվել համապատասխան հատուկ հիանարկներ, վորոնք աշխատում են տեղամասի ընդհանուր պլանի համաձայն:

X. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

53. Տեղամասի մանկական բնակչությանը, բացի ամբուլատոր և մահճակալային ոգնություն ցույց տալուց, յերեխաների ու անչափահասների նկատմամբ տեղամասի բուժհիմնարկները.

ա) Պարբերաբար (տարեկան 2 անգամից վոչ պակաս) բժշկական քննության են յենթարկում դպրոցականներին.

բ) Ապահովում են դպրոցականների համար անհրաժեշտ պատվաստումների կատարումը.

գ) Իրագործում են տեղամասի տերիտորիայի վրա գտնված դպրոցական շենքերի, դպրոցականների հանրակացարանների, ՖՁՈՒ-ների (Փաբրիկա-գործարանային դպրոցների) սանիտարական հսկողությունը.

դ) Կատարում են յերեխաների և անչափահասների ընտրությունը մասսայական առողջապահական և սանիտարական հիմնարկների համար (հրապարակների, ճամբարների, սանատորիաների և այլն) և իրագործում են բժշկական ու սանիտարական հսկողությունը տեղամասի յերեխաների և անչափահասների առողջապահական հիմնարկների վրա:

XI. ՏՆԱՅԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

54. Տեղամասի բուժհիմնարկների բժշկական և միջին բժշկական անձնակազմը տնային անհետաձգելի ոգնություն ցույց է տալիս այն դեպքերում, յերբ անհետաձգելի միջամտություն է պահանջվում (այրուհահոսություն, պաթոլոգիկ ծննդաբերության ժամանակ, դժբախտ դեպքերի ժամանակ և այլն):

55. Տնային ոգնություն ցույց տալու համար մեկնում է տեղամասի բժիշկը (բժիշկները) կամ նրա հանձնարարությունը միջին բժշկական անձնակազմը. վերջիններս, անհրաժեշտության դեպքում, կանչում են տեղամասի բժիշկին:

XII. ԿԱՊԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

56. Գյուղական բժշկական տեղամասը և նրա կազմի մեջ մտնող բուժ-պրոֆիմնարկներն իրենց աշխատանքում պետք է կապվեն նրա սպասարկման տերիտորիայի վրա գտնված բոլոր խորհրդային, կուսակցական, տնտեսական և հասարակական կազմակերպությունների հետ (գյուղխորհուրդներ, կուսակցական-կոմյերիտական կազմակերպություններ, կոլտնտեսությունների վարչություններ, տնտեսական-պրոֆիմիությունների կազմակերպություններ և այլն), հրավիրելով նրանց՝ ակտիվորեն մասնակցելու և աջակցելու տեղամասում բուժպրոֆիլակտիկ ոգնություն և սանիտարական ոգնություն կազմակերպելու գործում:



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ-ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ՅԵՎ ՖԵԼԴՇԵՐԱ-
ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I.	Ընդհանուր կանոններ	3
II.	Ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանի բուժպրոֆի- լակտիկ աշխատանք	4
III.	Հակահամաճարակային և սանիտարական աշխատանք	6
IV.	Ազգաբնակչության ինքնագործունեություն կազմակերպումը և սանիտարա-լուսավորական աշխատանք	7
V.	Ֆելդշերի իրավունքներն ու պարտականությունները	8
VI.	Մանկաբարձուհու իրավունքներն ու պարտականությունները	10
	Հավելված № 1, ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանի հաշվարկային գոկումենտացիան	15
	Հավելված № 2, ֆելդշերական կայանի հասարկությունը և ֆելդշե- րա-մանկաբարձական կայանի հասարկությունը	16
	Հավելված № 3, ֆելդշերական և ֆելդշերա-մանկաբարձական կայանի շենքը	16
	Հավելված № 4, բժշկական և անատոմիական սարքավորման ցուցակ ֆելդշերական կայանի համար—սպասարան հանդերձարանի հետ, կաբինետ և վիրակապական սենյակ	17
	Բժշկական գործիքներ	18
	Հավելված № 5, ֆելդշերական սպասարկման կայանի հաշվետվու- թյունը	21
	Հրահանգ—Ֆելդշերական սպասարկման կայանի հաշվետվությունը լրացնելու մասին	23
	ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՈՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	25
I.	Ընդհանուր կանոններ	27
II.	Գյուղական բժշկական տեղամասի խնդիրները	28
III.	Տեղամասային աշխատանք	30
IV.	Սանիտարա-հակահամաճարակային միջոցառումներ	32
V.	Ամբուլատոր ոգնություն	34
VI.	Ստացիոնար ոգնություն	35
VII.	Ծննդաբերական ոգնություն և հղի կանանց ու յերեխաների պատ- րոնած	35
VIII.	Սանիտարա-կուլտուրական աշխատանք	36
IX.	Տուբերկուլոզի, վեներական հիվանդությունների, տալիս ու մայի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումները	37
X.	Յերեխաների ու անչափահասների սպասարկումն	38
XI.	Տնային ոգնությունը և անհետաձգելի ոգնությունը	38
XII.	Կապը հասարակության հետ	39

Խմբագիր՝ Բժ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Թարգմանիչ՝ Ա. ՇԱԹԻՐՅԱՆ
Սրբագրել՝ ԱՐՏ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գլավիտի լիազոր № 13083

Պատվեր № 811

Հանձնվել է արտադրության 1—IX 1939 թ.

Ստորագրվել է տպագրելու 8—XII 1939 թ.

Կիրովականի տպարան, Մյասնիկյան—№ 73.

ՀՀ Ազգային գրադարան



NL0266853

603

7968